# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվար, 2021 թվականի № 2-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 61-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր իրավակարգավորումների և կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների փոփոխման արդյունքում Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի № 61-Լ որոշմամբ սահմանված որոշ դրույթներ կորցրել են իրենց արդիականությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Դադարեցնել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշման 2-րդ կետի գործողությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

13 հունվար, 2021 թվականի

ք. Երևան